Աշխատանքների գնում
Ազգային մրցութային սակարկություն

- **Լոտ 1. EFSD -W/3/2023 - Գյումրու քաղաքապետարանի «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ**
- **Լոտ 2. EFSD -W/4/2023 Գյումրու «Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա» ՓԲԸ**

Հայտատուները կարող են ներկայացնել հայտ մեկ լոտի, ցանկացած երկու լոտի համար: Հայտերը կգնահատվեն յուրաքանչյուր լոտի համար առանձին, հետևաբար մեկից ավելի լոտի համար հայտ ներկայացնելու դեպքում, յուրաքանչյուր լոտի համար պետք է լրացվի առանձին Կապալառուի հայտ և ներկայացվի: Յուրաքանչյուր լոտի համար կկնքվի մեկ պայմանագիր:

Մրցութային փաստաթղթերի բովանդակությունը

- Մաս 1
- Բաժին I. Ցուցումներ Հայտատուներին
- Բաժին II. Պայմանագրի պայմաններ
- Բաժին III. Հայտի Ձևեր, Որակավորման Տեղեկատվություն
- Բաժին IV. Պարտավորությունների Ապահովման Ձևեր
- Մաս 2
- Բաժին V. Մրցութային տվյալներ
- Բաժին VI. Պայմանագրի տվյալներ
- Բաժին VII. Մասնագրեր
- Բաժին VIII. Գծագրեր
- Բաժին IX. Գործառնությունների ցանկ միանվագ գումարի պայմանագրերի համար
- Հավելվածներ

Հայտատուի կողմից ներկայացված Հայտը պետք է պարունակի հետևյալը.

- (ա) Կապալառուի Հայտը (III-րդ Բաժնում նշված ձևով),
- (բ) Մրցութային երաշխիքը,
- (գ) Գործառնությունների ցանկ,
- (դ) Որակավորման տվյալների ձևը և փաստաթղթերը,
- (ե) Փաստաթղթերը/նյութերը, որոնք պահանջվել են, որպեսզի լրացվեն և ներկայացվեն Հայտատուների կողմից՝ ՄՏ-ում սահմանվածի համաձայն՝
- *ա. Էներգախնայողության/ԷԽ-երի/ միջոցառումների նկարագրությունը,*
- *բ. Մանրամասն աշխատանքային պլանը,*
- *գ. Ընդհանուր ներդրումային արժեքի հաշվարկը,*
- *դ. Էներգախնայողության տարեկան ցուցանիշը /տոկոսը/,*
- *ե. Էներգիայի պահանջարկի հաշվարկը նախքան ԷԽՄ-ների փաթեթի իրականացումը և հետո,*
- *զ. Էներգիայի սպառման նվազեցման գնահատումը,*
- *է. Զուտ բերված արժեքի /ԶԲԱ/ հաշվարկը,*
- *ը. Շ&Պ ժամանակացույցը*

Որակավորման տվյալներ

- Հայտ ներկայացնողի իրավաբանական կարգավիճակը (կցել համապատասխան փաստաթղթերը՝ պետական ռեգիստրում գրանցման վկայականի, արտոնագրի (երի) և այլնի պատճենները): Գրանցման վայրը՝ Գործունեության հիմնական վայրը՝ Հայտը ստորագրողի լիազորագիրը՝ (կցել):
- Հայտերը պետք է ուժի մեջ լինեն Հայտը բացելուց հետո 90 օրվա ընթացքում և ուղեկցվեն Հայտի երաշխիքով, փաթեթում նշված գումարով, կամ Հայտի ապահովման հայտարարագրով:
- Յուրաքանչյուր լոտի համար պետք է ներկայացվի առանձին կամ Հայտի ապահովման հայտարարագիր
- Նշել 2019թ, 2020, 2021 ընթացքում կատարած շինարարական աշխատանքների տարեկան ընդհանուր ծավալը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամով:
- Մասնակցի վերջին երեք տարիների ֆինանսական հաշվետվությունները՝ հաշվեկշիռներ, եկամուտի և կորուստի վերաբերյալ հաշվետվություններ, աուդիտորի հաշվետվություն և այլն: Թվարկել և կցել:

Աշխատանքներն իրականացնելու համար Կապալառուի առաջարկած սարքավորումների հիմնական միավորները:

Որակավորման չափանիշները ներառում են.

- Հաջողակ Հայտատուի կողմից վերջին երեք (3) տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը պետք է կազմի՝ /նայել փաթեթում նշված գումարը/
- Գլխավոր կապալառուի փորձ վերջին 5 տարիների ընթացքում /յուրաքանչյուր լոտի համար/ նմանատիպ ծավալի, բնույթի և բարդության աշխատանքների նվազագույնը երկու պայմանագիրպայմանագիր (ջեռուցում, օդափոխություն, օդի լավորակում, ԷԽՄ, ՖՎ) /այս պահանջին համապատասխանելու համար աշխատանքները պետք է 70 տոկոսով ավարտված լինեն/:
- Շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված՝ /նայել փաթեթում նշված գումարը/

Երբ հայտը ներկայացվում է մեկից ավելի լոտի համար, Հայտատուները պետք է բավարարեն համապատասխան լոտերի գումարային ընդհանուր պահանջներին, որ բավարարեն որակավորմանը և շնորհվեն մեկից ավելի պայմանագրով /պայմանագիր:

- Պայմանագրի ղեկավարման և իրականացման համար առաջարկված հիմնական աշխատակազմի որակավորումն ու փորձը: Կցել կենսագրական տվյալներ համառոտ կրթության և աշխատանքային փորձի մասին՝ մասնագետի ռեզյումե:
- Տեղեկություն ֆինանսական միջոցների աղբյուրների մատչելիության վերաբերյալ՝ կանխիկ գումարներ, վարկ ստանալու հնարավորություն և այլն: Նշել և կցել փաստաթղթերի պատճենները:
- Շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված՝ --------ՀՀ դրամ
- Այն բանկի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, տելեքսի և ֆաքսի համարները, որոնք Պատվիրատուին կարող են անհրաժեշտ տեղեկություններ տրամադրել՝ վերջինիս ցանկության դեպքում.
- Տեղեկություններ ընթացիկ դատավարությունների վերաբերյալ, որոնցում ներգրավված է Հայտատուն:

Այլ դրույթներ

- Ենթակապալառուի փորձն ու ռեսուրսները հաշվի չեն առնվի:
- Եթե հաջողակ Հայտատուն պահանջում է մրցութային փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանում, նա կարող է գրավոր դիմել Պատվիրատուին հայտերի հրավերում նշված հասցեով: Պատվիրատուն կպատասխանի պարզաբանման խնդրանքներին հայտերի ներկայացման վերջնաժամկետից մինչև 21 օր առաջ:
- Հաջողակ Հայտատուն պետք է ներկայացնի «ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից տրամադրված Պետական լիցենզիաների պատճեներ»
- *ա. « Լիցենզիա քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համար հետևյալ ներդիրներով՝ (i) բնակելի, հասարակական և արտադրական, (ii) էներգետիկա,*
- *բ. «Լիցենզիա քաղաքաշինության իրականացման համար հետևյալ ոլորտում (i) բնակելի, հասարակական և արտադրական, (ii) էներգետիկա»:*

Վերոնշյալ լիցենզիաները պետք է ներկայացվեն որպես Պայմանագրի շնորհման նախապայման:

Պայմանագրի համար շինհրապարակի կառավարման հիմնական անձնակազմը, որակավորումը և փորձը.

No.	Պաշտոնը	Փորձը տարիները /ընդհանուրը/	Տարիների փորձը առաջարկվող պաշտոնում
1	Պայմանագրի ղեկավար*	3	2
2	Գլխավոր ճարտարագետ*	4	3
3	Ջեռուցում, օդափոխություն, օդի լավորակում, ԷԽՄ, ՖՎ **	3	2
4	Շինարար ճարտարագետ**	5	3
5	Նախագծող ինժեներ**	2	2
6	Ինժեներ էլեկտրիկ**	2	2
7	Տնտեսագետ*	1	1

*Այս պաշտոնների համար կարող է առաջարկվել մեկ մասնագետ բոլոր Լոտերի համար

** Այս պաշտոնների համար մեկ մասնագետ կարող է առաջարկվել երկու Լոտով

Պարտադիր նյութեր, որոնք պետք է ներկայացվեն Հայտատուների կողմից հետևյալն են

- ա. Հայտատուների կողմից իրականացված գնահատման հիման վրա նախատեսված Էներգախնայողության/ԷԽ/ միջոցառումների նկարագրությունը,
- բ. Մանրակրկիտ աշխատանքային պլան, ԷԽՄ-երի տեխնիկական մոտեցումների և գաղափարների նկարագրություն, ներառյալ գծագրեր, լուսանկարներ, հղումներ սարքավորումների և նյութերի առկա մասնագրեր և այլն,
- գ. Ընդհանուր ներդրումային արժեքի հաշվարկը, որը կներառի նախագծա-նախահաշվային, շինարարական աշխատանքները, ինչպես նաև շահագործման ու պահպանման /ՇԵՊ/ և չափման և հավաստագրման /Չ և Հ/ ծառայությունները գործարկումից հետո առաջին 12 ամիսների համար,
- դ. Էներգախնայողության տարեկան ցուցանիշը /տոկոսը/,
- ե. Էներգիայի պահանջարկի հաշվարկը նախքան ԷԽՄ-ների փաթեթի իրականացումը և հետո,

Նյութեր, որոնք պետք է ներկայացվեն Հայտատուների կողմից հետևյալն են

- զ. Էներգիայի սպառման նվազեցման գնահատում,
- է. Զուտ բերված արժեքի /ԶԲԱ/ հարվարկը, ներառյալ Շ&Պ, Ներքին շահութաբերության նորմը և Պարզ ետգնման ժամկետը առաջարկվող ԷԽՄ-երի փաթեթի համար:
- Հաշվարկների ելակետային տվյալներ.
- տարիներ՝ 25
- զեղչման տոկոսադրույք՝ 7%

Հայտերի բացումը և գնահատումը

- Բոլոր հայտերը պետք է բացվեն հայտատուների ներկայությամբ՝ հետևելով ստանդարտ ընթացակարգերին: Բացման ընթացքում կհայտարարվեն Հայտատուների անունները, ԶԲԱ և տարեկան խնայողությունների մակարդակը: Պատվիրատուի կողմից կպատրաստվի ստուգաթերթիկ, որը կլրացվի Հայտերի բացման ընթացքում և կստորագրվի Հայտատուի կողմից:
- Նախքան հայտերի մանրակրկիտ ուսումնասիրելը, Պատվիրատուն պետք է բացահայտի, արդյոք բոլոր հայտերը համապատասխանում են ա. իրավասության ցուցանիշներին, բ. պատշաճ ձևով ստորագրված են, գ.ուղեկցվում են հայտի երաշխիքով, ըստ էության համապատասխանում են մրցութային փաստաթղթերի պահանջներին:
- Պատվիրատուն կգնահատի և կհամեմատի միայն այն հայտերը, որոնք բացահայտվել են ըստ էության համապատասխան: Ըստ էության համապատասխանող է համարվում այն Հայտը, որն առանց էական շեղումների և վերապահումների համապատասխանում է մրցութային փաստաթղթերիբոլոր պայմաններին, պահանջներին, ժամկետներին: /ՑՀ, 26-րդ կետը/:

Մերժման չափանիշներ

- Հայտը պատշաճ կերպով ստորագրված չէ,
- Հայտի ապահովման հայտարարագիրը ներկայացված չէ,
- Գնանշված գործառնությունների ցանկը լրացված և/կամ ստորագրված չէ:
- Շրջանառու ընթացիկ միջոցները և/կամ վարկային գծերի հնարավորությունը չեն համապատասխանում պահանջվածին,
- Հաջողակ Հայտատուի կողմից վերջին երեք (3) տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը չի համապատսախանում պահանջվածին,
- Փորձը որպես գլխավոր կապալառու Աշխատանքներին համարժեք չափի նվազագույնը երկու պայմանագիր վերջին 5 տարիների ընթացքում չի համապատսախանում պահանջվածին:
- Պայմանագրի շրջանակում ՄՏ-ում նշված սարքավորումները համապատասխան չեն:
- Պայմանագրի ղեկավարման և իրականացման համար առաջարկված հիմնական աշխատակազմի որակավորումն ու փորձը չի համապատասխանում պահանջվածին:
- Շարունակական բնույթ ունեցող դատական վեճերի կամ միջնորդ դատարանի քննության արդյունքում բացասական վճիռների առկայության պարագայում՝ հայտատուի կամ համատեղ ձեռնարկության որևէ անդամի դեմ կարող է հանգեցնել որակազրկման:
- Առաջարկվող ԷԽՄ-ի առաջարկը տեխնիկապես իրագործելի չէ:
- Առաջարկվող խնայողության նվազագույն մակարդակը ցածր է պահանջվածից:
- Հայտատուն ներկայացրել է բացասական ՋԲԱ:
- Մրցութային փաթեթի, Մաս 5. Մրցութային տվյալների 12.1-ով պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել կամ չեն համապատասխանում պահանջվածին:

Պայմանագրի շնորհում

- Պատվիրատուն պետք է շնորհի Պայմանագիրը այն Հայտատուին, որի Հայտը ըստ էության համապատասխանում է մրցութային փաստաթղթերին, մասնավորապես, սահմանում է տեխնիկապես հնարավոր տարբերակ և ըստ էության համապատասխանում է խնայողության նվազագույն մակարդակին և որն առաջարկել է ամենաբարձր ԶԲԱ-ով Հայտ, եթե այդ հայտատուն ճանաչվել է (ա) թույլատրելի, և (բ) որակավորված:

- Աշխատանքների կատարման երաշխիքի ձևը, որն ընդունելի կլինի Պատվիրատուի համար, հետևյալն է՝ Անվերապահ Բանկային Երաշխիք:

Հղումներ պայմանագրի կետերին

Աշխատանքը բաղկացած է.

- ա) ԷԽՄ-ի մանրամասն ճարտարագիտական նախագիծ,
- բ) էներգախնայողական միջոցառումների իրականացում,
- գ) Գործարկում;
- դ) Շ&Հ առաջին 12 ամիսների ընթացքում գործարկումից հետո;
- ե) Շ&Պ ծառայություններ առաջին 12 ամիսների համար գործարկումից հետո:

Պայմանագրի մաս են կազմում նաև հետևյալ փաստաթղթերը

Ի լրումն ՊՊ 2.1-ում նշված փաստաթղթերի, հետևյալ փաստաթղթերը նույնպես կազմում են Պայմանագրի մաս.

- Էներգախնայողության միջոցառումների պլան /ԷԽՄՊ/
- ԷԽՄ նախագծման տեխնիկական առաջադրանք /ՏԱ/
- Բնապահպանական կառավարման պլանի ստուգաթերթիկ
- Շահագործման և պահպանման /ՇԵՊ/պլան
- Չափման և հավաստման /ՉԵՀ/ պլան

Վճարումների ժամանակացույց

- 20% - որպես կանխավճար կվճարվի համապատասխան բանկային երաշխիքի տրամադրումից հետո:
- 10%-ը կվճարվի Պատվիրատուի կողմից հաստատված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ընդունումից հետո /Պայմանագրի արժեքի 13 տոկոսին համարժեք գումարի հաշիվ-ապրանքագրի հիման վրա/:
- 20%-ը կվճարվի փաստացի ավարտված ու ստուգված գործառնության/երի համար /Պայմանագրի արժեքի 27 տոկոսին համարժեք գումարի հաշիվ-ապրանքագրի հիման վրա/:
- 30%-ը կվճարվի շինարարական աշխատանքների ավարտական ակտի /Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի/ կազմումից և ստորագրումից հետո /Պայմանագրի արժեքի 40 տոկոսին համարժեք գումարի հաշիվ-ապրանքագրի հիման վրա/:
- 10%-ը կվճարվի կատարողականի հիման վրա, երբ Ծրագրի ղեկավարը կընդունի Պատվիրատուի լիազորված անձի կողմից խնայողությունների նվազագույնը xx%[1] ապահովելու վերաբերյալ գրավոր հաստատումը /հաստատումը հիմնված է ջեռուցման սեզոնի ընթացքում 15-օրյա Չափումների և հավաստումների վրա՝ Պայմանագրի արժեքի 10 տոկոսին համարժեք գումարի հաշիվ-ապրանքագրի տրամադրելուց հետո/:
- 10% - կվճարվի նույն գումարի և արժույթի չափով Կապալառուին Ցպահանջ բանկային երաշխիք ներկայացնելու դիմաց (որի վավերության ժամկետը կլինի 365 օր գումարած 28 օր)՝ Բաժին 7. Մասնագրեր դ) փուլի համար Ընդունման ակտը ստորագրելուց հետո:

Ընդունում

- Յուրաքանչյուր փուլի համար ընդունման ընթացակարգերը սահմանված են հետևյալ ձևով:
- ա. նախագծի, ԷԽՄ-երի և գործարկման համար.
- i) Պատվիրատուն պետք է ուսումնասիրի նախագծի համապատասխանությունը տեխնիկական պահանջներին,
- ii) Պատվիրատուն պետք է ստուգի նախագծային փաստաթղթերի որակի համապատասխանությունը ՏԱ-ի պահանջներին, պայմանագրի պայմաններին և ՀՀ օրենսդրությանը:
- iii) Պատվիրատուն պետք է ստուգի ավարտված աշխատանքները ըստ նախագծային փաստաթղթերի:
- iv) Եթե նախագծից զգալի շեղումներ չեն բացահայտվում, ապա իրականացված ԷԽՄ-երը պետք է ընդունվեն գործարկման ավարտից հետո՝ Ավարտական ակտի */Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի/* ստորագրումից հետո:
- բ. 15 օրյա Չ և Հ –ի համար. ընդունումը պետք է կատարվի ըստ Հավելված 9-ի դրույթների: Տարեկան էներգախնայողության նվազագույն մակարդակից 10 տոկոս շեղումը ընդունելի է:
- գ. Շ և Պ –ի համար. ընդունումը պետք է կատարվի ըստ Հավելված 11-ի դրույթների: Տարեկան էներգախնայողության նվազագույն մակարդակից 10 տոկոս շեղումը ընդունելի է:

Հայտերը պետք է ներկայացվեն **Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ** մինչև **2023թ. փետրվարի 9-ը, ժամը 15:00**:

Էլեկտրոնային եղանակով մրցութային հայտերի ներկայացում չի թույլատրվում: Հայտերը կբացվեն մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ:

Ուշացած հայտերը կմերժվեն և կվերադարձվեն փակ վիճակում հայտատուներին

Շնորհակալություն

Զարուհի Ղարագյոզյան
Գնումների բաժնի ղեկավար
+37455588076